ՀՀ ԳԱԱ ԱՎԱԳԱԳՈՒՅՆ
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ 70 ՏԱՐԻՆ

«Լրաբեր հասարակական գիտությունների» քառամսյա և բազմալեզվյան հանդեսը Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգա- յին ակադեմիայի հասարակագիտական և հայագիտական հնագույն հրատարակությունն է: Հիմնվել է 1940 թ.՝ որպես ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) տեղեկագիր, 1943-1965 թթ. կոչվել է Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների»: 1940-1947 թթ. լույս է տեսել անկանոն պարբերականությամբ. 1948-1990 թթ.՝ ամսագիր, 1991 թ.՝ երկամսյա, 1992-1995 թթ.՝ եռամսյա, 1996-ից առ այսօր՝ քառամսյա: Տարբեր ժամանակներում «Լրաբերը» խմբագրել են անվանի գիտնականներ Ս. Կարապետյանը, Հ. Բատիկյանը, Մ. Ներսիսյանը, Գ. Աբովը, Հ. Օրբելին, Ա. Հովհաննիսյանը, Հ. Ինճիկյանը, Վ. Միքայելյանը և ուրիշներ: 1988 թ. ի վեր հանդեսը խմբագրում է Ալբերտ Արմենակի Խառատյանը:

Հանդեսի 70-ամյա տարելիցին էր նվիրված ՀՀ ԳԱԱ նախագահության՝ 2010 թ. նոյեմբերի 18-ի հանդիսավոր նիստը:

Տարիների հեռվից արժևորելով հայրենական գիտության անվիճելի և բացառիկ դերը հասարակության զարգացման գործընթացում՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս, մեծարգո Ռադիկ Մարտիրոսյանը իր ողջույնի խոսքում ընդգծեց պարբերականի կարևորությունը հասարակագիտական միտքը ներկայացնելու հարցում՝ ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան գիտական հանրության առջև:

Հանդիսությանը ներկա անվանի գիտնականները (որոնց աշխատություններից շատերը միջազգային ճանաչում են ստացել)՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի

ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը, բանասիրության դոկտորներ Ազատ Եղիազարյանը և Լալիկ Խաչատրյանը երախտիքի խոսքեր ուղղեցին հոբելյար հանդեսին՝ նշելով նրա կարևորությունը իրենց գիտական մկրտության գործում:

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը բարձր գնահատեց «Լրաբերի» գիտական կարևորությունը և արդիականությունը: Դա արտացոլվեց նաև հանդեսի արդյունավետ աշխատանքի համար պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանի կողմից աշխատակիցներին վաստակագիր (գլխավոր խմբագիր Ա. Խառատյանին) և պատվոգրեր ու գովեստագիր շնորհելու միջոցով:

Հանդեսը տպագրում է պատմության, փիլիսոփայության, հասարակագիտության, բանասիրության, քաղաքագիտության, իրավագիտության, տնտեսագիտության և մշակույթի վերաբերյալ հոդվածներ և հրապարակումներ, արխիվային նյութեր, հասարակագիտական ու հայագիտական լրատվություն: Դրա բովանդակության և ծավալի կարևոր մասն են կազմում հայագիտական ուսումնասիրությունները: Հանդեսի էջերում տպագրվել և շարունակում են տպագրվել արդիական հարցադրումներով և նորովի մեկնաբանություններով հագեցած բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ, ինչպես, օրինակ, Հայկական հարցի, հայերի ցեղասպանության, Հայաստանի, հայ գաղթօջախների ու Սփյուռքի պատմության, դրանց մշակույթի, Ղարաբաղի պատմության, Արցախյան պատերազմի և այլնի վերաբերյալ:

«Լրաբերի» էջերում աճել և հասունացել են հայագետների և հասարակագետների բազմաթիվ սերունդներ, դրան աշխատակցում են ոչ միայն հայրենական, այլև Սփյուռքի և օտարազգի բազմաթիվ գիտնականներ: Հանդեսը տպագրում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով նյութեր: Տարածվում է արտասահմանյան տարբեր երկրներում:

«Լրաբերն» իր ծրագիրն իրականացնում է խմբագրական խորհրդի աջակցությամբ: